

Ն. ՏԵՐ-ՄԻԳԱՅԵԼՅԱՆ

«ՆՎԻՌՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ» (Հեղինակ՝ Միհրան Գամաղելյան)

Ս. Էջմիածնի մայրավանքը հանդիսանում է մի սրբություն Բայ ժողովրդի համար, որովհետև այստեղ են ծնունդ առել Բայց այրութենա ու գրականությունը, թարգմանական արվեստն ու առաջին հայկական դպրոցները: Այստեղ է հիմքը դրվել Բայ մանկավարժության, որ Ե դարի սկզբից շարունակվում է մինչև այսօր արդյունավետ կերպով:

Վերոհիշյալ աշխատության մեջ խոսվում է Բայ մանկավարժության բնագավառում Մայր Աստոր Սուրբ Էջմիածնի Գնորդյան ճեմարանի՝ տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի բարձրագույն ուսումնական այս հաստատության ունեցած կարևոր դերի ու նշանակության մասին:

Գործի հեղինակը ինքը երկար տարիների մանկավարժ է և մի քանի տասնամյակ գրադիւն է մեր ժողովրդի մանկավարժության պատմության ուսումնասիրմամբ: Մասամբ առնչված լինելով Ս. Էջմիածնի հետ՝ նա սիրով ձեռնամուխ է եղել այս կարևոր գործին, քանի որ ցարդ չի գրված այս կրթական հաստատության մասին ամբողջական և լիարժեք մի աշխատություն: Թեպեսն ըստավագրի նողվածներ կան Բայ մամուլում Գնորդյան ճեմարանի պատմության և կրթական ասպարեզում նյու ունեցած նշանակալի դերի, մասին, ռակայն սա առաջին հիմնարար գործն է, որով տրվում է լուսավորության աս օշակի լուրջ և ամբողջական ուսումնասիրությունը:

Մ. Գամաղելյանը գործի առաջաբանում շատ իրավամբ գրում է, որ «կրթական

հաստատությունների ստեղծումը միշտ եղել է Բայ ժողովրդի ուշադրության կենտրոնում»: Երկար դարեր շարունակ մեր «կեզուն և դպրությունն են Բանդիսացել Արագոյատևման Բիմնական նախապայմանները», քանի որ Բայ ժողովրդի դրկարժամանական եղել է պետականությունից զորուկ և միշտ ենթակա օտար արշավողների լծին: Մայր Աստորում գրեթե միշտ «գործել են եկեղեցական, վանական բարձր տիպի դպրոցներ»:

Գնորդյան ճեմարանից չեղ պահանջվում պատրաստել միայն կրտսեական գործիչներ, այլ նաև՝ կղթական, քաղաքական և հասարակական գործիչներ: Եվ իրոք, 19-րդ դարի չորրորդ քառորդում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում ճեմարանում սովորած բազմաթիվ ուսանողներ հետագայում դարձան ազգային-եկեղեցական անվանի գործիչներ, հայտնի մանկավարժներ, գիտնակամներ և նշանավոր դեմքեր հայկական կյանքում:

Գործի հեղինակը, ինչպես ինքն իսկ վկայում է, սույն աշխատությունը շարադրենիս օգտվել է տպագիր և անտիպ աղբյուրներից, «ԱՐԱՐԱՏ» ամսագրից, «ԻՆՎԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՍՄՈՒԹՅԱՆ» տարրեր հաստորներից, ինչպես նաև Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, «Պետական կենտրոնական, ճեմարանի բարուստ արխիվներից, Զարնցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրական բաժնի ֆոնդերից: Նա օգտվել է նաև Գարեգին Լևոնյանի և այլոց արխիվներից, Գառնիկ Ստեփանյանի տպագիր և ան-

տիպ գործերից, ինչպես նաև ճեմարանի նախկին դասախոսների և աշակերտների հուշերից:

Մինչեւ Գամաղելյանի սույն աշխատությունը բաղկացած է ինձնա գլուխներից, որտեղ խոսվում է նախ Գևորգյան ուսումնական հաստատության նախաճեմարանական շրջանի կրթական կյանքի և ապա այդ հոգեւոր հաստատության ամբողջական պատմության մասին:

Առաջին գլուխը (էջ 15—69) վերնագրված է այսպես. «Համառոտ ակնարկ էջմիածնի նախաճեմարանական շրջանի կրթական կրանքի մասին: Գևորգյան ճեմարանի բացումը»:

Հնագույն դարերում Հայաստանում ուսումը լայն տարածում չուներ, բացի այդ, սակավաթիվ ուսումնական հիմնարկներում դասավանդությունները տեղի էին ունենում օտար լեզուներով՝ հունարեն, ասորերեն կամ պարսկերեն: Դպրոցները գործում էին արքունի հոգածությամբ, որտեղ աշակերտները սենյում, հագնվում և խնամվում էին դպրոցի հաշվին: Դպրոցը չէր ծառայում միայն եկեղեցուն և արքունիքին, այլ նաև՝ հասարակ ժողովրդին: Ներսես Պարթև հայրապետի ժամանակ Հայաստանում ծաղկեցին օտարակեզու դպրոցները: Սակայն հետագայում պայմաններն ստիպեցին, որ ժողովուրդն ունենար իր սեփական այրութենու և մայրենի լեզվի ուսուցմանը դպրոցները:

Հայոց տառերի գյուտից հետո, Ե դպրի սկզբից, կրթությունը Հայաստանում ձեռք բերեց համաժողովրդական բնույթ, քանի որ ուսուցիչները հայեր էին, որոնք եկան փոխարինելու օտարներին: Հայպետու ուսուցմանը դպրոցներում սովորում էին և նախարարների, և շինականների զավակները, ինչպես նաև կանայք: Գևորգյոր դասագիրքը Աստվածաշունչն էր, որ սովորները պետք է լավ սերտենին:

Ս. Էջմիածնի վարդապետարանում Աստվածաշնչից բացի դասավանդում էին նաև հայոց լեզու, գրականություն և քերականություն, պատմություն, ճարտասանություն, դավանաբանություն, եկեղեցական երաժշտություն, տրամարանություն, գրչության արվեստ և մանկավարժություն: Այս դպրոցի սաները հետագայում դարձան հայկական գրչության արվեստի հիմնադիրները: Այստեղ հունարենից թարգմանված գործերը հետագա դարերում դարձան հազվագյուտ սկզբանական մեջքներին: Ս. Էջմիածնի հայատիպ դպրոցի առաջին մասնակիցներն են Ա. Մեսրոպը, Եղ-

միկը, Աղան Արծրունին, Ղազար Փարպեցին և ուրիշներ:

Հետագա դարերում հայկական դպրոցներն ապրեցին մեկ վերելքի, մեկ վայրէջքի շրջաններ:

1445 թ. Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ջանքերով նոր դպրոց բացվեց Էջմիածնում: Հետագայում այստեղ սովորեցին Ստեփանոս Սալմաստեցի և Միքայել Սեբաստիան հայրապետները: 16-րդ դարի սկզբից նորից մասնակի հայկական դպրոցները: Դպրոցների ցանցն աճեց և տարածվեց: Օրինակի համար, հիմնադրվեց Ս. Անահիայի հանապատի դպրոցը (այժմը յան Երևանի Ս. Զորավոր եկեղեցին): Սիմեոն Զուղարքեցին և Ուկան Երևանցին սովորել են Էջմիածնի դպրոցում: Հետագայում առաջին դարձավ դպրոցի տեսությը, իսկ երկրորդը՝ հայ տպագրության գործի մեծ ուժվիրաններից մեկը:

17-րդ դարում Հակոբ Զուղարքեցի կաթողիկոսի օրոք Էջմիածնի կրթական կյանքն ավելի բարելավվեց: Այստեղ մեծ երախտիք ունեցավ Ստեփանոս Լեհացին: 18-րդ դարում Սիմեոն Երևանցին թղթի փոքր գործարան և տպարան հաստատեց Մայր Աթոռում, որոնք առավել ևս զարկ տվեցին տեղի կրթական գործին: Էջմիածնի դպրոցն որոշ ժամանակ անփառունակ եղավ, սակայն ներսես Աշտարակեցի և Եփրեմ կաթողիկոսների օրոք ավելի լայն գործությունն ունեցավ: Թիֆլիսում հիմնադրվեց ներսիսյան վարժարանը:

Գևորգ Դ կաթողիկոսի նախաճեռնությամբ Էջմիածնի դպրոցն իր «տեղը զիջեց ավելի հզորացած ու առնականացած մի նոր դպրոցի, որը բարձրագույնի իրավունքով հիմնականում ծառայեց ազգի մշակույթի ու կրթության վեհ գործին և կրեց երշանկահիշատակ հիմնադրի անունը՝ Գևորգյան ճեմարան»:

Հայաստանի բազմաթիվ գյուղերում ևս բացվեցին ժողովրդական մանր դպրոցներ՝ պատաճներին նախակրթական ուսում տալու համար: Սակայն հետագայում ծայր տապակ ծխական դպրոցների հալածանքը, այն աստիճան, որ 1885 թ. իմակնեցին շուրջ 300 դպրոցներ: Նույն տարվա դեկտեմբերի 17-ին, ուղարկված բազմաթիվ բողոք-նամակների շնորհիվ, թույլ տրվեց վերստին բաց անել փակված հայկական դպրոցները:

Երկրորդ գլուխը (էջ 70—107) վերնագրված է այսպես. «Գևորգյան ճեմարանի նյութական պայմանները, կանոնադրական իրավունքներն ու պարտականությունները»:

Ծեմարանի շենքի կառուցման, դասախոսների աշխատավարձի և այլ հարակից ծախսերը կատարվել են համաժողովրդական համգանակությունների, կտակների և նվերների հաշվին: Գևորգյան ճեմարանի բացումից քիչ հետո, 1874 թ. հոկտեմբերի 16-ին, շենքն ենթարկվել է հրդեմի: Ծենքի վերականգնումը կատարվել է դարձայ ժողովրդից ստացված նվերներով: Նոյեմբերի հեռավոր վայրերից հայ գյուղացիներ սպալերով փոխադրել են անտառանութ և այլ շինանյութեր:

Հարուստ հայերի, Բաքվի Բարեկործական և այլ հայկական ընկերությունների նյութական օժանդակությամբ ճեմարանի գերազանցիկ որոշ սաներ գործողվել են Գերմանիայի, Սովորականի, Պետերբուրգի, Կիևի և Խարկովի համալսարանները՝ ավելի բարձր ուսում ձեռք բերելու համար:

Ղոկապան, Տիգրանյան, Խզմիրյան և այլ ֆոների հաշվին հրատարակվել են դասագրքեր և այլ գիտական աշխատություններ, հաստատվել են մրցանակներ: Նյութական այս օգնությունները շարունակվել են մինչև 1917 թ.՝ ճեմարանի փակումը:

1885—86 ուսումնական տարիվանցից ճեմարանը տվել է իր առաջին շրջանավարտները, որոնցից ընտրվել են որոշ դասախոսներ: Հետագայում էլ, օտար համալսարաններում տվյալած սաներից ոմանք դարձել են ճեմարանի գլխավոր դասախոսները (Կարապետ Տեր-Մկրտչյան, Գևորգ Չորեցյան, Հովհան Զորիայան, Գարեգին Հովհանիսյան հոգևորականները, Անք Հարությունյան, Ստեփան Կանայան, Մանուկ Աբելյան և այլն): Դրսից հրավիրվել է Օրմանյան սրբազնը:

Ծեմարանի ուսման մակարդակը հետագա շրջանում վերելք է ապրել: Սակայն վերահաս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծասին կրճատվել են հյութական հաստիքները, և ճեմարանն ստիպված է եղել փակել իր դոները 1917 թ. դեկտեմբերի 21-ին: Զգալապես նվազել են Մայր Աթոռի եկամուտներն ու նվիրատուերի քանակը, որով ստեղծված աննպատ նոր պայմանների հետևանքով փակվել է ճեմարանը:

Գևորգյան ճեմարանի դեկանարման գործում գլխավոր դերակատարներ են հանդիսացել օրվա կաթողիկոսը, Էջմիածնի սինոքը և մանկավարժական խորհուրդը, որինց որոշումներն ունեին օրենսդրական նշանակություն: Որոշումների կատարման վերաբնորդությունը դրված է եղել վերաբնորդություն, դրված է եղել պարագաների համարանություն, փիլիստիկայություն):

Ճակաման իրավունքը վերապահված է եղել միայն կաթողիկոսին: Վերատեսչն են ենթարկվել տեսուչը, վերակացուները, դասախոսներն ու սաները: Նրան իրավունք է որվել, անհրաժեշտության դեպքում, հեռացնելով դասախոսին կամ որևէ աշակերտի: Կարգապահութանը հետևել և հսկել են վերակացուները: Դաստիարակներն օգնողի և օժանդակողի պարտականությունն են ունեցել:

Ծեմարանի դասարանական բաժինն (6 տարի) ավարտողն ընդունվել է լսարանական բաժին (3 տարի), իսկ այս բաժինն ավարտողն էլ ստացել է ճեմարանի վկարականը: Դասախոսներից շատերը դարձել են բազմաթիվ գրքերի հեղինակ և հետագայում մեր ազգային մշակույթի հայտնի գործիչներ և գիտնականներ:

Գորքի երրորդ գլուխը (Եջ 107—171) վերնագրված է արագեստում: «Դպրոցական գործի սահմանափակումները: Ծեմարանում հետզինետք ծավալվող մանկավարժական և հայագիտական գործունեությունը»:

Հայկական դպրոցների քանակի աճի հետ 19-րդ դարի չորրորդ քառորդում հայարձեակ զանազան վայրերում հրատարակվել ակսեցին մանկավարժական ամսագրեր և տարեգրեր: Այսպես, օրինակ, Թիֆլիսում լուս տեսան «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԾԽԱՐԾ», «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» (1873), «ՎԱՐԺՄԱՐՄ» (1882), «ԱՐՑՈՒՐ» (1888) և «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» (1884), Թեղոդոսիայում՝ «ԴԱՍՏԻԱՐԱԿ» (1873—74), Էջմիածնում՝ «ԴՊՐՈՑ» (1874—76), Մովկայում «ՄԱՆԿԱՎԱՐԺ» (1892), Երևանում՝ «ՊՍԱԿ» (1880—83) և այլն: Թեպետու սրանց մեծագույն մասը կարձատու կյանք ունեցավ, սակայն 19-րդ դարի հայ մանկավարժության պատմության մեջ այս թղթերը մեծ դեր կատարեցին:

Այս շրջանում աչքի ընկան նշանավոր մանկավարժներ՝ Շանշյանը, Նազարյանը, Նարանջյանը, Պողոսը, Սովորակ և շատ ուրիշներ: Հրապարակ իշխան նույնիսկ հայ կին մանկավարժներ և հիմնադրեցին մանկավարտեզներ:

Մանկավարժությունը մեծ թափ ստացավ Գևորգյան ճեմարանում, որտեղ հոգևորականներ պատրաստելուց բացի, նպատակ է դրված եղել նաև կրթված մանկավարժներ պատրաստել հայկական դպրոցների համար: Այստեղ առաջին անգամ լինելով սկսել են դասավանդել մանկավարժություն և հարակից առարկաներ (հոգերանություն, տրամարանություն, փիլիստիկայություն):

Պահպանված են 1880-ական թթ. ուսումնական տարեշրջաններում լսարանա-

կան բաժնում մանկավարժության դասավանդման ծրագրերը, որոնք համապատասխանել են այդ օրերի ուսական և եկրոպական համալսարանների նույն մասնագիտության ծրագրերին: Այդ ծրագրերի ներին Սեղրակ Մանդինյանն էր, որն ուներ գերմանական բարձրագույն ուսում և մեծապես կրթված անձ էր: Մանդինյանց հետո Շ. Էդիլյանն էլ մեծ վաստակ է ունեցել ճեմարանում՝ մանկավարժության ուսուցման գործում:

Գևորգյան ճեմարանն իր ունեցած խնամված ծրագրերով և Եկրոպայում ու այլուր բարձրագույն ուսում ստացած դասախոսներով դարձավ Հայաստանում իր ժամանակի մայր ռարդոցը, որը մեծ օգուտ և ուղղություն տվեց թեմական և ծխական մյուս դպրոցներին: Լինելով մեր երկրի միակ բարձրագույն դպրոցը՝ Գևորգյան ճեմարանը ուսուցիչներ էր պատրաստում նաև մյուս դպրոցների համար:

Հջմիածնի ճեմարանը հանդիսացավ հայագիտության գլխավոր կենտրոններից մեկը, շնորհիվ իր շուրջը բույրված հայագետների, որոնք մեծ զարկ տվեցին հայ մշակույթի զարգացման ու ուսումնակրթմանը: Այստեղ հայագիտությունը դրվեց գիտական բարձր հիմքերի վրա: Դասախոսական կազմի բազում անդամներ հայագիտական լորջ գործերի հետինակ էին և ճեմարանում դասավանդում էին հայ ժողովրդուն, հայ գրականություն, երաժշտություն, մատենագրություն, ազգագործուն և այլն: Նրանցից էին Գ. Տեր-Մկրտչյանը, Մ. Աքելյանը, Ստ. Մալիսայանը, Կոմիտաս Վարդապետը, Գարեգին վրդ. Հովհանիսյանը, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Կ. Կոստանդիանը և շատ ուրիշներ:

Ճեմարանի ավարտական կուրսի ուսանողներին դասախոսների կողմից հանձնարկվում էր պատրաստել շարադրություններ՝ նվիրված հայագիտական զանազան բնույթի թեմաների: Դրանք լինում էին սովորաբար 100—200 էջի սահմաններում, երեսն նաև ծավալով ավելի ընդարձակ աշխատություններ: Այս աշխատություններից շատերն ունեցել են գիտական լորջ մակարդակ: Դասախոսներից շատերը մանկավարժության հետ զուգակցում էին հայագիտությունը՝ աշխատելով հայագիտական նյութերի նկատմամբ հասուն սերև հետաքրքրություն ստեղծել ճեմարանի ուսանողության մեջ, ապագա գիտական կաղը ու ունենալու մտահոգությամբ:

Գրքի չորրորդ գլուխը (Էջ 172—222) վերնագրված է այսպես. «Հայկական դրա-

րոցները փակելու պետական ձեռնարկումները և կրթության վիճակը ճեմարանում (1890—1900 թթ.)»:

1880-ական թթ. ցարական իշխանությունները փորձեր կատարեցին պետական վերահսկողության ներարկելու հայկական դպրոցները և սկսեցին անտեղի կերպով միջամտել ներքին գործերին: Մակար և Մկրտիչ կաթողիկոսներն ամեն կերպ աշխատում էին առաջքն առնել այս միջամբությունների: Անքարենացատ այս պայմաններում մեծ դեր ուներ կատարելիք Գևորգյան ճեմարանը: Այն լինելով մայրեկրի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը, ամբողջ ժողովրդի ուշադրությունը կենտրոնացած էր նրա վրա:

1882-ի դեկտեմբերին, ճեմարանի հիմնադիր Գևորգ Դամոհիկոսի մահից հետո, ճեմարանում ծագեցին աշակերտական հոգումներ, խոռվություններ և անկարգություններ:

Անդրկովկաստմ ծայր տվեց պայքար «ՄԾՈՂ»-ի և «ՆՈՐ ԴԱՅ»-ի կողմնակիցների միջև: Վերջիններս պահպանողականներ էին, որոնք ճակատ էին կազմել մշակականների դեմ: Այս երկու հոսանքների միջև սկիզբ տած պայքարն արձագանք գտավ նաև ճեմարանում: Այս հանգամանքը պատճառ դարձավ, որ պետական իշխանությունների վերահսկողությունն ավելի ուժեղանա հայկական դպրոցների վրա: Ցարական ճնշումը հայերի վրա գնալով շեշտվեց: 1896 թ. կառավարական մարմինները սկսեցին պետականացնել և ապա փակել տայ հայկական դպրոցները: Ճեմարանն ու թեմական դպրոցները դուրս մնացին այս միջոցառումից:

1906—07 թթ. ուսումնական տարվանից Գևորգյան ճեմարանում դասավանդվում էին մի շաբթ առարկաներ, ինչպես՝ տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքանություն և այլն, որոնք մինչև այդ թվականը դասավանդվում էին միայն աշխարհիկ բարձրագույն հաստատություններում:

Ճեմարանում ուսուցվող գլխավոր առարկաներն էին՝ մայրենի լեզու, հայոց պատմություն և աշխարհագրություն, գրականություն և երաժշտություն, կրոնական և հայագիտական նյութեր: Անցնում էին ուսերեն և մի օտար լեզու, որ նախ ֆրանսերենն էր, ապա՝ գերադասվեց գերմաներենը: Դասավանդվում էին նաև ֆիզիկա, աստղագիտություն, երկրաշափություն, թրվաբանություն և այլ ճշգրիտ գիտություններ, վայելչագրություն, նկարչություն և այլն:

Գրքի հինգերորդ գլուխը (էջ 223—265) վերնագրված է այսպես. «Հասարակական վերելքի և առաջադիմական շարժումների ազդեցության արտահայտությունը Շեմարանում (1900—1917 թթ.)»:

Շեմարանի հոգևորական ուսուցիչները կազմում էին դասախոսների պահպանողական թնը, մինչ հոգևոր կոչում չունեցող ուսուցիչները կողմնակից էին ազատական և առաջադիմական գաղափարների: Բոլորն էլ, սակայն, աշխատում էին աշակերտներին դատիքարակել հայրենասիրության ոգով:

Շեմարանում զարկ էր տրվում աշխատանքային դաստիարակությանը, հատկապես գյուղատնտեսությանը: Զգալի տեղ էր տրվում նաև գեղագիտական և ֆիզիկական դաստիարակությանը: Արտադարանական և արտադպրոցական աշխատանքների վրա մեծ ուշադրություն էր դարձվում: Սաները հետաքրքր ներկայացումներ էին տախին ճեմարանում:

20-րդ դարն սկսեց Ռուսաստանում կայսիությունի բուռն զարգացումով, որի հետևանքով ձևավորվեց աշխատավոր պրոլետարիատը: Երկրում տեղի ունեցան հոգումներ, բախումներ և ծագում առան ժողովրդական դժգոհություններ ցարական իշխանությունների և կառավարման դաժան կարգերի դեմ: Բողոքի համաժողովրդական ալիքը տարածվեց ամբողջ երկրով մեկ: Այն հասավ մինչև Հայաստան՝ իր արձագանքը գտնելով նաև ճեմարանում: Պետական իշխանություններն աշխատեցին հայ ժողովոյի ուսուականացումն իրականացնել՝ առաջին հերթին իրենց ձեռքը դնելով հայ կրթական օջախների վրա: 1903 թ. հունիսի 12-ին ցարի հրամանով հաստատվեց հայոց եկեղեցապատկան կալվածքների գրավումը, որը պատճառ դարձավ համընդիանուր բողոքների և ցուցերի: 1905 թ. օգոստոսի 1-ին ցարի մեկ այլ հրամանով բռնագրավված հայ եկեղեցական կալվածքները ետ վերադարձվեցին իրենց սեփականատիրոջը, իսկ նախապես էլ փակված հայկական դպրոցները վերաբացվեցին:

Մինչ այդ ուսական սոցիալ-դեմոկրատական գաղափարները թափանցեցին Հայաստան, որոնք մեծ ազդեցություն ունեցան ճեմարանի և հայկական այլ դպրոցների ուսուցիչների և աշակերտության վրա: Շեմարանում կային առաջադիմական գաղափարներով տոգորված ուսուցիչներ և աշակերտներ, որոնք արձագանքեցին ժամանակի հրադարձություններին: Այս պայմաններում պայքար ծավալվեց ճեմա-

րանի պահպանողական ուսուցիչների, ուսանողների և առաջադիմական գաղափարներով տարված խմբակի միջև: Գևորգ Ե կաթողիկոսը, չընդառաջելով այս վերջին խմբակի պահանջներին, բազմաթիվ աշակերտներ ինքնակամ հետացան ճեմարանից, իսկ որոշ ուսուցիչներ էլ հեռացվեցին:

Պատերազմի տարիներին ավելի վատացավ ճեմարանի և դպրոցների հյութական և կրթական վիճակը: 1917 թ. դեկտեմբերի 20-ին դաշնակցական զինվորական հրամանաւորությունը պահանջեց անմիջապես ազատել ճեմարանի շենքը, որով կաթողիկոսը ստիպված եղավ հաջորդ օրն իսկ փակել տալ այս կրթօջախը:

Գրքի վերջին գլուխը (էջ 266—296) վերնագրված է «Գևորգյան ճեմարանի հունձքը»:

Հեղինակն այս բաժնում տախին է կենացարությունը հայ մշակույթի նշանավոր այն գործիքների (ոմանց լուսանկարներով հանդերձ), որոնք ստվորել են ճեմարանում կամ ավատել այն: Նա հիմնականում օգտվել է Գ. Ստեփանյանի հրատարակած բառարանի երկու հատորներից, ինչպես և առաջին աշխատական ստվետական հանրագիտարանից:

Այստեղ խոսվում է ակադեմիկոսներ՝ լեզվաբաններ Մ. Աբեղյանի և Ստ. Մալխասյանի, բանասեղծ Ավ. Խաչակրանի, գրականագետ Ս. Տերերյանի, կաթողիկոս Գևորգ Չորեցյանի, պատմաբաններ Ն. Աղոնցի, Ս. Աբրահամյանի, Ս. Կանայանի և Վ. Ռշունու, մանկավարժներ Գ. Էղիսյանի, Թ. Խզմայլյանի, Խ. Կանայանի, Ս. Շավարշյանի, Գ. Սագինյանի և Ս. Սանթրոսյանի, երաժիշտներ Կոմիտաս վարդապետի, Ա. Պատմագրյանի և Գ. Մյունու, գրականագետներ Ս. Սուաքելյանի, Գ. Լունյանի և Ս. Խերանյանի, բանասերներ Գ. Տեր-Մկրտչյանի և Ե. Տեր-Մինասյանի, գրող Ակսել Բակոնցի, մաթեմատիկոս Բ. Բահաթրյանի, հրապարակախոս Գ. Հայկունու, քաղաքական գործիչ Ս. Միկոյանի մասին:

Այս կարևոր աշխատությունը անշուշտ գերծ չէ մի քանի մանր վիճապումներից, որոնց մասին կուգենք նշել այստեղ:

Հեղինակը գրքի 154-րդ էջում ֆրանսիական Լիոն քաղաքի հին անունը տվել է ԼՈՒԴ-ԴՈՒՄ ձևով, որ, մեր կարծիքով, պետք է լինի ԼՈՒԳ-ԴՈՒՆՈՒՄ կամ ԼՈՒԳ-ԴՈՒՆՈՒՆՈՒՄ (լուսում կամ լուսաւում):

Նույն էջում, խոսելով Կարապետ Տեր-Մկրտչյանի առաջին գրվածքի մասին,

գրված է «ՊՈԶԻԿՅԱՆՆԵՐ», մինչդեռ այն պետք է լինի «ՊԱՎՂԻԿՅԱՆՆԵՐ»: Խոսքը պավիլկյան շարժման մասին է:

45-րդ էջում ճեմարանի հիմնադրության թվականը նշված է 1869 մայիսի 18-ը, ապա վեց տող ներքևում գրված է մայիսի 25-ը, որոշ շփոթություն առաջացնելով լճթերցողի մտքում:

230-րդ էջում գրված է ՎԱՐԴԱՆՈՑ ԵՎ ՂԵՎՈՆԴԱՑ տոների մասին, մինչդեռ ցարդ ընդունված ձևը ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՎ ՂԵՎՈՆԴԱՆՑ ձևն է:

Մեր համեստ կարծիքով գրքի անունը անհաջող է ընտրված: Ավելի նպատակահարմար և դյուրահասկանալի կլիներ, եթե այն ուղղակի լիներ է ԶՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳ-ՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԸ, քանի որ գրքի ամբողջ բովանդակությունը վերաբերում է ուսումնական այս հաստատությանը:

Վերջում տրված «Ծեմարանի հունձքի» բաժնում չեն տրված Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի անունն ու կենաւգրությունը, հակառակ, որ նա բազում թելերով կապված է եղել իր ժամանակին Գեւորգյան ճեմարանին, որպես աշակերտ, ուսուցիչ և վերատեսուչ:

Այս բոլորով հանդերձ, վերոհիշյալ մասը վրիպումներն երբեք չեն նսեմացնում Միհրան Գամաղելյանի այս գրքի արժեքը, որով առաջին անգամ ընթերցողի սեղանին է դրվում ուսումնական այս կարևոր հաստատության գրեթե ամբողջական և բազմակողմանի ուսումնասիրությունը: Գրեթե կես դար (1869—1917 թթ.) գործած Գևորգյան ճեմարանի պատմությունն ավելի վաղուց պետք է գրված լիներ: Բարեխիղն հեղինակը շնորհակալ գործ է կատարել՝ այս բացը փակելու համար:

